ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 23/1 **Հեռ. (010) 54-79-08, kentron-dataran@mail.ru**

ԵԱԴԴ/0045/01/15
ԴԴ-9.1-Ե 210267
07.10.2020թ.

ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավար

պարոն Կ. Փոլադյանին

Հարգելի պարոն Փոլադյան

Ուղարկում եմ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 07-ին կայացված՝ «Փորձագետին վարձատրելու մասին» որոշման օրինակը:

Խնդրում եմ հանձնարարել կատարել որոշման պահանջները:

Առդիր որոշումը՝ «4» թերթից:

Հարգանքով՝

ԴԱՏԱՎՈՐ **Մ. ԱԱԿՅԱՆ**

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՄՈՒՏՔ № 11218
ԱՄՍԱԹ 08.10.20թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՎԱՐՁԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«07» հոկտեմբերի 2020թ. ք. Երևան

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ.Մակյանս, ուսումնասիրելով թիվ ԵԱԴԴ/0045/01/15 քրեական գործի նյութերն ըստ մեղադրանքի՝ Գագիկ Գրիգորի Աբրահամյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ ԵԱԴԴ/0045/01/15 քրեական գործն ըստ մեղադրանքի Գագիկ Գրիգորի Աբրահամյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, որը Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան է ստացվել 03.07.2015թ-ին:

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից՝ 04.09.2017թ-ին կայացված դատավճռով՝ ամբաստանյալ Գագիկ Գրիգորի Աբրահամյանի մեղադրանքը վերաորակվել և նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելու մեջ և դատապարտվել է ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով: Վերոնշյալ դատական ակտի դեմ մեղադրողի և տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի վերաքննիչ բողոքները բավարարվել են մասնակիորեն և Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 04-ի դատավճիռը՝ Գագիկ Գրիգորի Աբրահամյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասով 2018 թվականի հոկտեմբերի 22-ին բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

ԵԱԴԴ/0045/01/15 քրեական գործը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել 02.04.2019թ-ին, որը 2019թ-ի ապրիլի 03-ին ընդունվել է նախագահող դատավորիս վարույթ:

ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի՝ թիվ ԵԱԴԴ/0045/01/15 քրեական գործով 2018 թվականի հոկտեմբերի 22-ին կայացված որոշմամբ արձանագրված քննության ծավալն ապահովելու նպատակով 2020 թվականի փետրվարի 17-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից որոշում է կայացվել Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հոգեբանության ամբիոնի դոցենտ Գայանե Հակոբի Ղազարյանին և Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հոգեբանության ամբիոնի դասախոս Անահիտ Հրանտի Տեր-Ստեփանյանին՝ ԵԱԴԴ/0045/01/15 քրեական գործով որպես հոգեբան-փորձագետներ նշանակելու մասին:

Նույն օրը դատարանի կողմից որոշում է կայացվել դատահոգեբանական կրկնակի հանձնաժողովային փորձաքննություն նշանակելու մասին և 21.02.2020թ-ին թիվ ԴԴ-9.1-Ե 40995/20 ուղեկցական գրությամբ քրեական գործն ուղարկվել է Երևան Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր Ա.Մուրադյանին՝ նշված փորձագետների միջոցով որոշման պահանջներն ի կատար ածելու նպատակով:

2020 թվականի հոկտեմբերի 05-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել թիվ ԵԱԴԴ/0045/01/15 քրեական գործով կայացված դատահոգեբանական փորձաքննության թիվ ՂԳ/ԱՏ/82/20 եզրակացությունը և քրեական գործի նյութերը: Համաձայն փորձաքննության թիվ ՂԳ/ԱՏ/82/20 եզրակացությանը կից ներկայացված տեղեկանք-նախահաշվի՝ արձանագրված է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատարանում քննվող՝ ԵԱԴԴ/0045/01/15 քրեական գործով դատահոգեբանական փորձաքննության փորձագիտական եզրակացությունը /«32» էջ/ ավարտվել է ԵՊԲՀ բժշկական հոգեբանության ամբիոնի փորձագետներ Գ.Ղազարյանի և Ա.Տեր-Ստեփանյանի կողմից: Կատարված աշխատանքների տեսակները և դրանց կրա ծախսված ժամանակը՝

1.Հետազոտվող առարկայի վերաբերյալ հատուկ գրականության վերլուծություն - 4 ժամ /2 անձ/,

2. Ծանոթացում տրամադրված նյութերին և վերլուծություն - 16 ժամ /2 անձ/,

3. Հոգեբանական թեստավորման և փորձագիտական զրույցի անցկացում - 4 ժամ /2 անձ/,

4. Հոգեբանական հետազոտության արդյունքների վերլուծություն - 6 ժամ /2 անձ/,

5.Եզրակացության կազմում տեխնիկական ձևակերպում - 4 ժամ /2 անձ/:

Ընդհամենը՝ 34 ժամ /2 անձ/, որը կազմում է 68 ժամ:

1 անձի 1 ժամվա համար վճարը 4500 դրամ, 34 ժամվա համար 1 անձի գումարը կազմում է 153 000 դրամ»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 166-րդ հոդվածի՝

« 1. Քրեական գործով վարույթում թարգմանիչը, մասնագետը, փորձագետը ստանում են՝

(...)

2) քրեական վարույթն իրականացնող մարմնի հետ պայմանավորված չափով վարձատրություն՝ պետական բյուջեի հաշվին, եթե աշխատանքը կատարել են քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով.

(...)

2. Սույն հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում վարձատրությունը տրվում է թարգմանչի, մասնագետի, փորձագետի կողմից հաշիվ ներկայացնելուց հետո՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կայացրած որոշման հիման վրա»:

Արձանագրում եմ, որ սույն գործով Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հոգեբանության ամբիոնի դոցենտ Գայանե Հակոբի Ղազարյանը և նույն ամբիոնի դասախոս Անահիտ Հրանտի Տեր-Ստեփանյանը դատահոգեբանական կրկնակի հանձնաժողովային փորձաքննությունը կատարել են վարույթն իրականացնող մարմնի պահանջով, ուստի, նրանց վարձատրությունը պետք է իրականացվի ՀՀ Դատական դեպարտամենտի միջոցով՝ պետական բյուջեի հաշվին՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ սույն դեպքում դատարանի կայացրած որոշման հիման վրա:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի՝

«1. Իրենց իրավասության սահմաններում գործը միանձնյա քննող, դատական նիստի նախապատրաստման, դատավճռի կամ այլ որոշման կատարման ապահովման ուղղությամբ կարգադրիչ գործողություններ իրականացնող դատավորներն օժտված են դատարանի լիազորություններով...»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 42 և 166-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քննվող ԵԱԴԴ/0045/01/15 քրեական գործով նշանակված, դատահոգեբանական կրկնակի հանձնաժողովային փորձաքննությունն իրականացրած փորձագետներ՝ Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հոգեբանության ամբիոնի դոցենտ Գայանե Հակոբի Ղազարյանին /անձնագիր՝ AT0476885, տրված՝ 09.10.2019թ-ին 019-ի կողմից/ և նույն ամբիոնի դասախոս Անահիտ Հրանտի Տեր-Ստեփանյանին /անձնագիր՝ AR0411004, տրված՝ 07.08.2017թ-ին 006-ի կողմից/ ՀՀ դատական դեպարտամենտի միջոցով՝ ՀՀ պետական բյուջեի հաշվին՝ վճարել 153.000-ական / մեկ հարյուր հիսուներեք հազար ական/ ՀՀ դրամ գումար:

ԴԱՏԱՎՈՐ Մ.ՄԱԿՅԱՆ